ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՒՄԲ

**N 22-24**
**01.03.2022**

ՀՀ արդարադատության նախարար
պարոն Կարեն Անդրեասյանին

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի պարոն Անդրեասյան,

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի անդամները (այսուհետ՝ Խումբ) ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ կատարած այցելության ժամանակ առանձնազրույց են ունեցել ազատազրկված անձ Կարեն Հովհաննիսյանի հետ: Վերջինս տեղաշարժվում է սայլակի օգնությամբ, նա նշել է, որ ունի սրտի հետ կապված առողջական խնդիրներ, սակայն որևէ բուժում չի իրականացվում: Նշվածից բացի  քանի որ սայլակով է տեղաշարժվում, այդ վիճակով լոգանք ընդունելը շատ դժվար է, սակայն հիմնարկը համապատասխան աթոռ չի տրամադրում:

Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք կազմակերպել Կարեն Հովհաննիսյանի բուժզննությունը և բուժումը, ինչպես նաև նրան ապահովել լոգանքի համար հարմարավետ աթոռով՝ նախատեսված հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Հարգանքով՝

Խմբի նախագահ — Զարուհի Հովհաննիսյան

Վարդանանց փակուղի 8, 112 սենյակ, Երևան, ՀՀ • Հեռ.՝ +374 98 606 393 • Էլ.փոստ՝ prisonarmenia@gmail.com •
Կայք՝ www.pmg.am